ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՆԳԵԼԻՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂՆԻՔՆԵՐԸ

Արեւելքի երկրներում ընդհանրապես, իսկ Հայաստանում մասնավորապես, միջին դարերում քաղաքային բնակչության կենցաղում կարեւոր նշանակություն ունեին բաղնիքները: Որպես կանոն, արեւելյան խոշոր քաղաքներում գոյություն են ունեցել մի քանի փասնյակ բաղնիքներ: Օրինակ՝ Հալեպում ԺԳ դարի կեսերին գործել է 138 հասարակական բաղնիք: Միջին Ասիայի քաղաքներում գործող բաղնիքների քանակը նույնպես մեծ է եղել: Ուսումնասիրողները վկայում են, որ Սամարղանդ քաղաքը ունեցել է 60-80 բաղնիք, իսկ նրա միջնաբերդ Աֆրասիաբադը՝ 3-4: Անդրկովկասի քաղաքներում նույն պատկերն է[1]:

Տվյալ պահին ոչ բոլոր հայկական բաղնիքներն են հայտնաբերված, իսկ հայտնաբերվածները հանգամանորեն ուսումնասիրված եւ չափագրված չեն: Հայաստանի միջնադարյան բաղնիքների մասին միակ ընդհանրացված եւ ամբողջական աշխատությունը գրել է Հ. Խալփախչյանը: Նմանատիպ աշխատությունները քիչ չեն, սակայն բավականին տարաբնույթ են, եւ վերոհիշյալ աշխատություններում շեշտը հիմնականում դրվում է բաղնիքների ճարտարապետության, ոչ թե ջեռուցման տեխնիկայի, ջրամատակարարման ու կիրառական նշանակության վրա: Միայն Ա. Ջաղացպանյանն է փորձել իր աշխատության մեջ անդրադառնալ ջեռուցման խնդրին[2]:

Միջնադարյան Հայաստանում բաղնիքները (ըստ նշանակության) նախատեսված էին անհատական եւ ընդհանուր օգտագործման համար: Անհատական օգտագործման բաղնիքները գտնվում էին հոգեւոր եւ աշխարհիկ ֆեոդալների պալատներում[3] եւ պալատական համալիրի մի մասն էին կազմում: Այդպիսին էին Դվինի (Զ-Է դդ.), Անիի բաղնիքները (ԺԱ-ԺԲ դդ.): Բագրատունիների Մաղասբերդ (Ժ դ.) ամրոցի բաղնիքը գտնվում էր գլխավոր աշտարակի ստորին հարկում եւ ուներ ներքին լուսային բակ: Ընդհանուր օգտագործման բաղնիքները գտվում էին բնակավայրերի ներսում, ինչպես, օրինակ՝ Անիի քաղաքային բաղնիքները (ԺԲ-ԺԳ դդ.), Լոռի բերդ-ամրոցի (ԺԱ-ԺԲ դդ.), Ամբերդի (Ժ-ԺԱ դդ.), ինչպես նաեւ Առաքելոցի (ԺԲ-ԺԳ դդ.) եւ Իջեւանի (ԺԳ դ.) բաղնիքները: Հազվագյուտ դեպքերում են բաղնիքները կառուցվել բնակավայրերից հեռու: Այդպիսին էր Տաթեւի բաղնիքը (ԺԷ-ԺԸ դդ.), որը գտնվում էր այգում՝ ամրոցի պարիսպների եւրեւում: Բաղնիքը մշտապես ջրով

1 Տե՛ս **Ի. Գ. Ղարիբյան**, Լոռի քաղաք-ամրոցի միջնադարյան բաղնիքները, «Բանբեր Երեւանի համալսարանի», 2000 , թ. 2, էջ 100:

2 Տե՛ս **А. А. Джагацпанян,** Бани средневековой Армении и их теплотехнические особенности, ИФЖ, 1968, թ. 3, էջ 241:

3 Տե՛ս **О. Х.Халпахчьян**, Гражданское зодчество Армении, М.,1971, էջ 211-213:

մատակարարելու համար հաճախ կառուցում էին հատուկ ջրամբարներ, որտեղից ջուրը մատակարարվում էր ամբողջ բաղնիքով անցնող խողովակների միջով: Այդպիսի ջրամբարներ ունեին Դվինի[4] եւ Անիի միջնաբերդի բաղնիքները,[5] Լոռի բերդի փոքր բաղնիքը: Ամբերդի բաղնիքը ջրամատակարարվում էր բնակավայրի ընդհանուր ջրամբարից: Իսկ Առաքելոցի բաղնիքի խողովակացանցը միանում էր սարի լանջին գտնվող հանքային աղբյուրին: Մեփաղյա կաթսաները, որոնցում տաքացվում էր ջուրը, սովորաբար գտնվում էին խուցի հատակի տակ, խարույկի վրա (Անիի միջնաբերդի եւ Ամբերդի ամրոցի բաղնիքները)[6]:

Միջնադարյան հայկական բաղնիքների նախատիպը Գառնիի բաղնիքն է[7]: Այստեղի ջեռուցման համակարգը կիրառվում էր նաեւ միջնադարում[8]: Իր հատակագծային հորինվածքով ու չափերով բաղնիքը որոշ նմանություն ունի Արմազիում (Վրաստան) պեղված բաղնիքին (մ. թ. Բ-Գ դդ.)[9]:

Միջնադարյան Հայաստանում բազմաթիվ բաղնիքներով հայտնի էր հատկապես Անի քաղաքը: Դրանցից մեկը կառուցված էր Բագրատունիների պալատի միահարկ շինության հյուսիսային մասում եւ ուներ յոթ բաժին. լողավազանով երկու լողարան, երկու հանդերձարան եւ այլն: Կանանց եւ տղամարդկանց բաժինները միմյանցից անջատված էին ջեռուցատնով: Ջեռուցատանը տեղավորված էին սառը ջրի ավազանը եւ ջրատաքացման կաթսան: Տաք եւ սառը ջուրը փոքր տրամաչափի երկու խողովակներով հասնում էր լողարանները ու լցվում պատերի տակ դրված քարե տաշտերը[10]: Հատակը հողից մեկ մետր բարձրությամբ քարե սյունիկների վրա էր: Այդ միջակայքով բաց էին թողնվում տաքացված գազեր, որոնք, տաքացնելով հատակը, դուրս էին գալիս դիմացի պատի մեջ տեղադրված ծխնելույզից[11]: Հնոցը մաքրելու համար հաճախ ստիպված էին լինում վերին սալահատակը տեղ-տեղ բարձրացնել: Այդ իսկ պատճառով Անիի պալատական բաղնիքի հնոցը բավականին բարձր էր[12]: Տաք օդն անցնում էր նաեւ լողարանների պատերում ուղղաձիգ դրված խողովակներով: Գոյություն ունեին սառը եւ տաք ջրի կաթսաներ, որոնցից ջուրը մատակարարվում էր ընդհանուր լոգասրահ: Վերջիններս ուղղանկյունաձեւ էին, երկարությունը՝ մոտավորապես մեկ մետր[13]: Բաղնիքում օգտագործված ջուրը առանձին խողովակներով թափվում էր Ախուրյանի ձորի:

Անի քաղաքում՝ Տիգրան Հոնենցի եկեղեցուց ոչ հեռու՝ դեպի հյուսիս, 1893 թ. պեղվել են բաղնիքի մնացորդներ: Եկեղեցու պատին փորագրված է 1215-ով թվագրվող մի արձանագրություն, որտեղ ասվում է, որ Տիգրան Հոնենցը կառուցել է բաղնիք եւ ջրամատակարարման ցանց («... Ի քաղաքիս հայրենիք բաղնիսն ու միլը...»)[14]: Այս բաղնիքի հատակագ-

4 Տե՛ս **Գ. Գ-Ղաֆադարյան**, Դվին քաղաքը եւ նրա պեղումները, Եր., 1952, էջ 54:
5 Տե՛ս **Н. Я. Марр**, Ани, Л., 1934 .
6 Տե՛ս **О. Х. Халпахчьян.** նշվ.աշխ., էջ 213-214:
7 Տե՛ս **Б. Н. Аракелян**, Гарни, Ер., 1955.
8 Տե՛ս **А. А. Джагацпанян**, նշվ. աշխ., էջ 242-243:
9 Տե՛ս **Վ. Հարությունյան,** Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 231:
10 Տե՛ս **Վ. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 231:
11 Տե՛ս **А. А. Джагацпанян**,նշվ. աշխ., էջ 244-245:
12 Տե՛ս անդ, էջ 246-247:
13 Տե՛ս **О. Х. Халпахчьян**, նշվ. աշխ.,էջ 214:
14 Տե՛ս **Վ. Հարությունյան**, Անի քաղաքը, Եր.,1964,էջ 80: «Դիվան հայ վիմագրության», պրակ 1-ին, Եր., 1966, արձանագրություն, թ.188, 62-63: Р.В.Епремян, նշվ. աշխ., էջ 9-10:

ծային լուծումը, որ փոքր-ինչ տարբերվում է հայկական նույն շրջանի այլ հուշարձաններից (Ամբերդ, Անիի միջնաբերդ, Լոռի բերդ), ինչպես նշում է Հ. Խալփախչյանը, նույնակի է հարեւան երկրների (Վրաստան, Ադրբեջան, Իրան, Թուրքիա) եւ անգամ Միջին Ասիայի ու Վոլգայի բուլղարների բաղնիքների հետ[15]:

Ըստ Ղ. Ալիշանի՝ ուղղանկյունաձեւ հատակագծով բաղնիքը բաղկացած է եղել երկու հիմնական մասերից՝ օժանդակ եւ սպասարկող[16]: Արեւմտյան կողմում գտնվող օժանդակ մասը բաղկացած էր երկու սենյակից, հավանական է՝ ջեռուցարանից եւ վառելիքի պահեստից: Սպասարկող մասի հատակագիծը սիմետրիկ էր: Կենտրոնում քառակուսի գմբեթածածկ տարածություն էր, որի չորս կողմում գտնվում էին մեկական թաղածածկ սենյակ՝ ոչնչով չանջատված կենտրոնական մասից: Նրանցից մեկի մեջ բացվում էր դուռ: Կենտրոնական այս տարածությունն իր չորս թեւով ծառայել է որպես հանդերձարան ու հանգստարան լողացողների համար: Սրալակտիտային առագաստների վրա հենվող գմբեթներով ծածկված լողարանները գտնվում էին չորս անկյուններում եւ ունեին քառակուսի հատակագիծ: Դեպի լողարաններն էին տանում մեկական մուտք, որոնք տեղավորված էին կենտրոնական տարածության անկյուններում: Սենյակների այսպիսի դասավորությունը կենտրոնական շինության շուրջ ոչ միայն արդարացվում էր գործնականորեն, այլեւ հետաքրքիր էր իր ներքին ճարտարապետությամբ[17]:

Լոռի քաղաքի միայն միջնաբերդում բաղնիքները երկուսն են, կառուցվածքով բարդ ու բազմանշանակ: Նրանց զբաղեցրած տարածքները համարյա հավասար են եղել, ուստի նրանցից մեկն անվանել են առաջին, իսկ մյուսը, որ գտնվում է Զորագետի կիրճի եզրին, երկրորդ:

Ուսումնասիրողները Լոռի քաղաքի միջնաբերդի պեղումներից պարզել են, որ առաջին բաղնիքը բավականին բարդ ճարտարապետական կառուցվածք ունեցող շինություն է: Այն կարելի է համեմատել միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր կոմունալ-կենցաղային կառույցների, մասնավորապես, Անիի բաղնիքների հետ (պալատական բաղնիք, Տիգրան Հոնենցի եւ այլն): **Պ**եղումները հաստատեցին Հ. Խալփախչյանի այն ենթադրությունը, **թե**բաղնիքի հանդերձարանի զբաղեցրած շատ մեծ տարածքի մի մասը որպես նախամուտք էր ծառայում: Իրոք որ, շինարարները նախկինում կառուցել են մի փոքր նախամուտք՝ շուրջ 6 մԱ մակերեսով (3.25x1. 8 **մ**): Ճարտարապետական այս լուծումը հանդերձարանի ներսում կապահովեր համեմատաբար կայուն ջերմություն: Դրանից բացի, նախամուտքի եւ լողասրահին հարող պատի միջեւ կա մի փոքրիկ սենյակ, որի հարավ-արեւմտյան անկյունում՝ հանդերձարանի պատին կից, բացվեց հարթ սալաքարերով շարված մի փոքրիկ ջրավազան (0.43x0.37 **մ**): Հատակը եւ կողային սալաքարերը պատված էին անջրաթափանց բարձրորակ շաղախով եւ հարթ սվաղով: Պեղումներով հայտնաբերվեցին խնդրո առարկա աղբյուր-ջրավազանին ինչպես ջուր մատակարարող, այնպես էլ հեռացնող կավե, ոչ մեծ տրամագիծ ունեցող փողրակներ, որոնցից առաջինը՝ մատակարարողը, ավերված էր,

15 Տե՛ս **Օ. Հ. Халпахчьян**, Средневековые бани Армении, էջ 226-227:
16 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Շիրակ, Վենետիկ, 1881:
17 Տե՛ս **Վ. Հարությունյան**, նշվ. աշխ., 81:

իսկ ջրահեռացմանը լավ էր պահպանվել[18]: Նման տիպի աղբյուր-ավազանի գոյությունը միջնադարյան Հայաստանի՝ մեզ հայտնի բաղնիքների հանդերձարաններում հանդիպում է առաջին անգամ: Բայց նմանատիպ երեւույթի մենք ծանոթ ենք առավել վաղ ժամանակաշրջանի բաղնիքներից (Գառնի):

Ա. Ջաղացպանյանը նշում է, որ այստեղ չէր կիրառվում գազերի միջոցով հատակը տաքացնելու տեխնիկան[19]: Պետք է նկատել, որ շինարար վարպետները քնարկվող բաղնիքների դռները տեղադրել են տարբեր առանցքների վրա՝ ներսի տաք օդի կորուստը նվազագույնի հասցնելու համար: Մասնավորապես հանդերձարանի մուտքը տեղադրել են քիչ դեպի ձախ:

Հազարաշենի հանդերձարանը զբաղեցրել է բավական ընդարձակ տարածություն՝ 41 մ² (6.3x6.5 մ): Դա հաստատվում է հանդերձարանի ներսում իրարից հավասարապես հեռու տեղադրված չորս խոշոր քարե խարիսխների առկայությամբ, որոնք պեղումների ժամանակ հայտնաբերվել են փոքր-ինչ տեղաշարժված վիճակով: Դրանց վրա փայտե սյուներ են կանգնեցված եղել: Բաղնիքն ամբողջությամբ կոպտատաշ քարերից է կառուցված եղել: Հետեւաբար խարիսխների կիսամշակ լինելը միանգամայն բնորոշ է ողջ կառույցին: Հանդերձարանի հատակը շարված է մեծ չափերի թրծած աղյուսների (20x20x5սմ) եւ կրաշաղախի համադրությամբ: Տեղ-տեղ քանդված աղյուսաշաղախը հետագայում լրացվել է քարե սալերով: Հանդերձարանի հատակը կառուցված չէ կրկնակի սկզբունքով, հետեւաբար վերջինս չի ջեռուցվել: Ինչպես նշում է Ի. Դարիբյանը, հավանաբար շինարարները նկատի են ունեցել այն հանգամանքը, որ հանդերձարանի երկու պատերի շուրջ 2/3 մասը դրսից ծածկված է եղել հողով, իսկ մյուս պատերը կից են եղել լողասրահին եւ նախամուտքին: Այդքանը միանգամայն բավական էր սրահում կայուն ջերմաստիճան ունենալու համար: Իսկ հատակը ծածկվել է խսիրներով ու կարպետ-միդարներով, որպեսզի աղյուսների ու սալաքարերի սառնությունը տհաճություն չպատճառեր[20]:

Լոռի բերդի մեծ բաղնիքի հանդերձարանի հյուսիս-արեւմտյան անկյունից դեպի լողասրահ բացվում է մեկ այլ մուտք, որը, սակայն, անմիջապես չի հաղորդակցվում նրա հետ: Այստեղ կառուցված են երկու բաժանմունքից բաղկացած փոքրիկ սենյակ-հարկաբաժիններ, որոնց չափերն են 6 մ² եւ 5.4 մ²: Առաջինը լավ սալահատակված է, իսկ երկրորդի հատակը չի պահպանվել: Շատ դժվար է որոշել, թե այս երկու սենյակները ինչ նպատակի են ծառայել: Եթե ընդունենք, որ դրանցից առաջինը ծառայել է ուղղակի լողասրահի եւ հանդերձարանի միջեւ իբրեւ միջանցք-նախամուտք, որտեղ լողացողները կարող էին չորացնել իրենց մարմինը կամ նախապատրաստվել լողասրահ մտնելու, ապա երկրորդ սենյակը հավանաբար ծառայել է լողացողներին անմիջապես սպասարկող անձանց (քիսաչիներ): Այստեղ գտնվել է հասարակ խեցեղեն:

Հնարավոր է նաեւ, որ այս սենյակը ծառայեր օծանելիքների եւ լողանալուն անհրաժեշտ այլ պարագաներ պահելու համար: Հիշյալ երկու սենյակները կամարածածկ են, իսկ լուսավորության խնդիրը պարզ չէ:

---

18 Տե՛ս **Ի. Գ. Դարիբյան**, Լոռի քաղաք-ամրոցի միջնադարյան բաղնիքները, էջ101:

19 Տե՛ս **А. А. Джагацпанян,** նշվ. աշխ., էջ 246:

20 Տե՛ս **Ի. Գ. Դարիբյան**, նշվ. աշխ., էջ 102:

Միջանցիկ սենյակից մուտք է բացվում դեպի լողասրահը: Այն քառանկյուն կառույց է, որի երկարությունը 7.4 մետր է, լայնությունը՝ 5.6 մետր: Վերջինս ծածկելու համար հյուսիսից հարավ բաժանել են երկու անհավասար մասերի: Ըստ Ֆ. Խալփախչյանի՝ այդ պատը կառուցել են ոչ միայն տանիքի ծածկը իրականացնելու, այլ նաև լողասրահի տարբեր մասերում տարբեր ջերմաստիճան ստեղծելու համար: Հետևաբար բարձր ջերմաստիճան կունենար լողասրահի փոքր բաժանմունքը, որը կից էր ջեռուցարան-հնոցին[21]: Լողասրահի բաժանմունքները նախկինում իրար հետ հաղորդակցվել են փոքր դռներով: Այժմ միջնորմ պատի մեծ մասը քանդված է, եւ նրանից պահպանվել են չնչին մնացորդներ:

Բաժանմունքներից յուրաքանչյուրը ծածկել են գմբեթների ու թաղերի ինքնուրույն համակարգով: Այն մասը, որը հարակից է հանդերձարանին, ծածկել են գմբեթով, իսկ կողքերից՝ թաղերով: Մյուս հարկաբաժինը, որոնք կից են ջեռուցարանին, ծածկել են երկու փոքրիկ գմբեթով ու նրանց միջև ընկած թաղով: Գմբեթները կառուցված են առանց թմբուկների, սֆերիկ առագաստների վրա: Ծածկի համար որպես շինանյութ օգտագործվել է մանր, աղյուսաձեւ կտրված տեղական քարը[22]: Գմբեթաձեւ ծածկը հնարավորություն էր տալիս տանիքի տակ տաք օդի եւ գոլորշու կուտակման հետեւանքով լոգասրահում պահպանել անհրաժեշտ քանակությամբ թթվածին, իսկ կուտակված գոլորշին ջրի վերածվելով հոսում էր պատերով. հակառակ դեպքում, եթե ծածկը հարթ լիներ, ապա ջրի սառը կաթիլները կկաթեին լողացողների վրա եւ տհաճություն կպատճառեին: Այս հանգամանքն էլ հենց նվազեցնում էր օդափոխման կարիքը եւ հնարավորություն էր տալիս դա իրականացնել միայն գմբեթի վրա լույսի ներթափանցման համար արված անցքերի շնորհիվ: Ամբերդի բաղնիքը եւս նույն համակարգով էր գործում[23]: Լոռի բերդի մեծ բաղնիքի մեծ գմբեթի վրա ինը, միջինի՝ յոթ, իսկ փոքրի վրա երեք երդիկ կար: Լողասրահի հատակը ականապեսների կարծիքով շարված է եղել թրծած աղյուսներով, որոնք պատվել են անջրաթափանց կրաշաղախի բարդ բաղադրությամբ: Վ. Հարությունյանը ենթադրում է, որ ջեռուցարանի ծուխը եւ տապը անցնում էին լողասրահի հատակի տակ ու տաքացնում այն: Տեղանքի մանրակրկիտ ուսումնասիրությունը բավարար հիմքեր է տալիս նման ենթադրության օգտին: Լողասրահի հարավարեւմտյան պատի մեջ բացվել է մանր քարերով շարված, դեպի եթեր դուրս եկող խողովակաձեւ անցք: Այս փաստն անշուշտ խոսում է լողասրահի հատակի տաքացման օգտին: Բայց դա հավանաբար լրիվ բավարար չէր կարող լինել ողջ լողասրահում համապատասխան տաքություն ապահովելու համար: Այդ պատճառով տաք եւ սառը ջրի կավե փողրակները տեղավորել են ամբողջ արեւելյան, հյուսիսային եւ հարավային պատերի մեջ, շուրջ մեկ մետր բարձրության վրա: Լողասրահի նման եղանակով տաքացումը հավանաբար ապահովում էր անհրաժեշտ 25-30 աստիճան ջերմություն:

Լողասրահի եւ ջեռուցարանի միջև կա հաղորդակցվող մի պատուհան, որը հավանաբար ծառայել է կաթսայից ջուր վերցնելու համար: Խալփախչյանը պնդում է, որ այդ պատուհանը բացվել է հետագայում, այն ժամանակ, երբ ինչ-ինչ պատճառներով սկզբնական

21 Տե՛ս **Օ. Հ. Խալփախչյան,** Средневековые бани Армении, էջ 226:
22 Տե՛ս **Ի. Դարիրյան**, նշվ. աշխ., էջ 103:
23 Տե՛ս **Ա. Ա. Джагацпанян**, նշվ. աշխ., էջ 247:

համակարգը, որը նախատեսված էր դեպի լողասրահ տաք ջրի մատակարարման համար, այլևս չէր գործում:

Բարձր հարթություն ունեցող բաժանմունքի հատակը եւ պատերը պատված են անջրաթափանց կրաշաղախի հաստ շերտով: Այստեղից կավե մի փողրակ թեքությամբ ուղղված է դեպի լողասրահը: Հ. Խալփախչյանը եւ ուրիշներ ենթադրում են, թե հնոցի մեջ բարձր հարթության վրա տեղադրված բաժանմունքը ծառայել է որպես սառը ջրի ավազան: Ի. Ղարիբյանը պեղումներով շնորհիվ պարզել է, որ այս բաղնիքի լողասրահին սառը ջուր մատակարարվել է նույն լողասրահի հյուսիսարեւելյան անկյունում տեղադրված փողրակով: Վերոհիշյալ փողրակի գոյության մասին տեղյակ չեն եղել նախորդ ուսումնասիրողները, ուստի նրանք հանգել են ոչ ճիշտ եզրակացության: Ջեռուցարանի ցածր հատակով բաժանմունքը ծառայել է կաթսա կամ այլ հարմարանք դնելու համար, ուր տաքացրել են ջուր: Ջեռուցարանից դեպի լողասրահ անցնող կավե փողրակը միացել է հատակից 0.9 մետր բարձրության վրա անցնող երկշարք կավե փողրակների վերին շարքին: Խողովակաշարի ջրածորանների տակ դրվել են քարե մեծ տաշտեր, որոնց մեջ տաք եւ սառը ջրերը խառնվելով ապահովել են լողանալու համար անհրաժեշտ ջեմպերատուրան, որոնց տարողությունը 0.13 մ² էր, այսինքն՝ լիովին կբավարարեր երկու-երեք մարդու լողանալու համար: Քարե տաշտի անկյուններից մեկում՝ հատակի հարթության վրա, թողնված է մի նեղ անցք՝ ջուրը հեռացնելու համար: Ուսումնասիրվող բաղնիքի համար որպես շինաքար հիմնականում օգտագործվել է տեղական կիսամշակ բազալտը: Հավանաբար բաղնիքը նախատեսված է եղել երկսեռ բնակչության համար, տարբեր օրերի հերթականությամբ:

Լոռի բերդի երկրորդ բաղնիքը կարելի է դասել միջնադարյան Հայաստանի ճարտարապետա-հատակագծային առումով բարդ կառուցվածք ունեցող բաղնիքների շարքին: Այն ունեցել է տեղանքի բնական պայմաններին հարմարեցված հանդերձարան, տարբեր չափերի երեք լողասրահ, հնոց-ջեռուցարան եւ երկբաժանմունք ջրամբար՝ սառը ջրի մշտական պաշար պահելու համար: Հյուսիսից հարավ բաղնիքի բաժանմունքներն ամբողջ արեւելյան պատով միանում են քարաժայռին այնպես, որ համապատասխան մասերում նրանք չունեն պատերի արտաքին երես: Իսկ հանդերձարանն ու մեծ լողասրահն արեւմտյան պատով կառուցված են գետահայաց՝ ճիշտ անդունդի եզրին: Այդ հանգամանքը որոշ չափով հեշտացրել է բաղնիքի կեղտաջրերի հեռացման խնդիրը, որը լուրջ դժվարություններ էր առաջացնում միջնաբերդի կենտրոնում կառուցված առաջին բաղնիքի համար: Բաղնիքը կառուցված է տեղական կիսամշակ բազալտ եւ ֆելզիտային քարերից: Բոլոր բաժանմունքների ծածկերն իրականացվել են թաղերի եւ սֆերիկ ծածկերի օգնությամբ: Հավանաբար այստեղ եւս գոյություն են ունեցել երդիկներ:

Հանդերձարանի կենտրոնում գտնվել է բազալտով եւ կրաշաղախով շարված նստարան, որի երեսը նույնպես պատված է կրաշաղախով: Պեղումների ընթացքում գտնվել են նաեւ սակավաթիվ առարկաներ: Հանդերձարանի հատակը չի պահպանվել, միայն անկյունային մասերում պահպանված մնացորդներով կարելի է դատել նրա զբաղեցրած դիրքի մասին: Հանդերձարանի հարավարեւելյան անկյունից մի կամարակապ մուտք բացվում է դեպի փոքրիկ միջանցք: Մուտքի չափերն են՝ 80 սմ լայնություն եւ 180 սմ բարձրություն[24]:

24 Տե՛ս **Ի. Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 105-108:

Երկրորդ բաղնիքի լողասրահների մեջ՝ ջրածորակների տակ, ինչպես առաջինում, դրված են եղել քարե տաշտեր:

Արշավախումբը երկրորդ բաղնիքի ջեռուցարան-հնոցի տեղը պարզելու նպատակով մաքրել է հանդերձարանի հյուսիսային կողմում ընկած տարածությունը: Այստեղ հայտնաբերվել է մի կառույց, որը միջնորմային խուլ պատերով բաժանված է եղել երկու հավասար մասի: Կառույցը լրիվ մաքրելուց հետո պարզվել է, որ այն ժամանակին ծառայել է որպես սառը ջրի ջրամբար: Ջրամբարը ծածկել են գմբեթի տեսքով, որը հաստատվում է հյուսիսարեւելյան անկյունում պահպանված պատի վերին շարքի շարվածքից: Դժբախտաբար, այս բաղնիքի ջեռուցարան-հնոցի գտնվելու նախնական տեղը մնում է անհայտ:[25]

Հաջորդ բաղնիքը Ամբերդի դղյակից հարավ՝ արեւելյան պատի մոտ գտնվող 1026 թվականին Վահրամ Պահլավունու կողմից կառուցված ոչ մեծ բաղնիքն է՝ բաղկացած հիմնականում երկու սրահներից՝ լողասրահից եւ հանդերձարանից: Այս բաղնիքը միջնադարյան Հայաստանի՝ մեզ հասած ամենալավ պահպանված բաղնիքն է, քանզի պահպանվել են նույնիսկ ծածկերն ու գմբեթները: Բաղնիքը ունի գմբեթաձեւ ծածկ՝ լույսի ներթափանցման համար արված անցքերով՝ երդիկներով: Հատակը քարե սալերից է, որոնք շարված են քարե պատվանդանների վրա՝ ստեղծելով միջանցիկ հատված ջեռուցման իրականացման համար: Ջեռուցումը իրականացվել է նույն եղանակով, որը կիրառվել է Անի եւ Լոռի բերդերի բաղնիքներում: Ջրամատակարարումը նույնպես իրականացվել է վերը նշված բաղնիքների նման: Բաղնիքի հյուսիսային կողմում գտնվել է փայտաշեն երկհարկանի մի կառույց, որի առաջին հարկը, հավանաբար, ջեռոցը հսկողի եւ վառելիքի որոշակի պաշար պահելու սենյակն էր[26]:

Այս բաղնիքների բոլոր բաժանմունքների ծածկերն իրականացվել են գմբեթների եւ թաղերի ինքնուրույն համակարգով: Մի կողմից դա հեշտացրել է կառույցների ծածկերի խնդիրը, մյուս կողմից հիգիենիկ է: Լուսավորության խնդիրը լուծվել է հազարաշեն կառույցներին բնորոշ եղանակով՝ երդիկներով: Ոչ մեծ շինություններում (Ամբերդ, Տաթեւ) լուսավորումը առաստաղի մեջ արվել է մեկ անցքի շնորհիվ: Իսկ Լոռի բերդի մեծ բաղնիքի լողասրահի առաստաղի մեջ թողնված երդիկների դասավորությունից կարելի է ենթադրել, որ դրանց թիվը պետք է լիներ հինգից յոթը, առավելագույնը՝ ինը, որոնցից կենտրոնականը՝ մեծ, իսկ շրջապատինը համեմատաբար փոքր տրամաչափի: Թե ինչպես էին անում, որ կասեցնում էին մթնոլորտային նստվածքների ներթափանցումը շինություն այդ անցքերի միջոցով՝ հայտնի չէ: Շատ քիչ դեպքերում պատուհանները տեղադրված էին պատի վրա, ինչպես, օրինակ՝ Տաթեւի բաղնիքի հանդերձարանի փոքրիկ պատուհանը: Օդափոխությունը նույնպես այդ լուսամուտների միջոցով է կատարվել: Դրանից բացի հաճախ օդափոխանակման հատուկ ուղիներ էին կառուցվել, որոնք կարգավորել են սրահի ջերմաստիճանը: Նմանատիպ երեք ուղիներ գտնվել են Տաթեւի բաղնիքի լողասրահում[27]:

Պեղումները հնարավորություն են տալիս պնդելու, որ Հայաստանի միջնադարյան

25 Տե՛ս անդ, էջ 109-110:

26 Տե՛ս **А. А. Джагацпанян**, նշվ. աշխ., 245-246:

27 Տե՛ս **О. Х. Халпахчьян**, Гражданское зодчество Армении, 218: Ի. Ղարիբյան, Լոռի քաղաք-ամրոցի միջնադարյան բաղնիքները, 102:

բնակավայրերի բաղնիքները ենթարկվել են ներքին հարդարանքի: Եթե Անիի եւ Ամբերդի բաղնիքների լողասրահների պատերը ներսից ներկում էին տարագույն ներկերով, ապա Լոռիում այդ նպատակի համար երբեմն օգտագործվել են ջնարակապատ փոքրիկ սալիկներ: Դրանք պատված են տարբեր գույնի՝ սեւ, սպիտակ, կաթնագույն, բաց կապույտ, կանաչ, երբեմն էլ դեղին ջնարակով: Դա եզակի երեւույթ չէ: Նման սալիկներ գտնվել են նաեւ Վրաստանի Դմանիսի քաղաքի բաղնիքի պեղումների ժամանակ: Իսկ Անիից գտնված նման ջնարակապատ սալիկների նախնական պատկանելության հարցում հստակություն չկա:

Նախկինում բաղնիքները ունեին նաեւ այլ գործառույթներ: Այստեղ հաճախ հանդիպում էին ծանոթներ, զրույցներ էին ծավալվում, շահմատի ու նարդու մրցաշարեր էին անցկացվում, կնքվում էին առեւտրական պայմանագրեր: Բաղնիք այցելությունը տեւում էր մի քանի ժամ: Լոգանքը բավականին երկար արարողակարգ էր: Լոգասենյակ կարելի էր հասնել միայն ապտիճանաբար տաքացող սենյակների միջով: Դա հնարավորություն էր տալիս ընտելանալ լոգասենյակի բարձր ջերմաստիճանին: Տաքացած հատակին՝ կեղտոտ ջրի մեջ չկանգնելու համար, հագնում էին բարձր փայտե կոշիկներ: Լոգանքը ուղեկցվում էր պարտադիր մերսումով, որը իրականացնում էր քիսաչին: Լողացողի ցանկությամբ կարող էին հատուկ ցեխ օգտագործելով հեռացնել վերջինիս մարմնի ողջ մազածածկույթը եւ քսել անուշաբույր քսուկներ: Լոգանքի արարողակարգը ավարտելուց հետո հանգստանում էին հանդերձարանում, որի կենտրոնում հաճախ շատրվան էր լինում: Այստեղ պառկած վայելում էին շատրվանի զովությունը, սնվում էին, ըմպում սուրճ, թունդ թեյ, ոգելից խմիչքներ եւ ծխում էին նարգիլե: Միջնադարում ֆեոդալները եւ իրենց անվանի հյուրերը լոգանքից հետո (հանգստի ժամանակ) հաճախ դիտում էին թատերական ներկայացումներ: Մանկուց այլանդակված խեղկատակի, մշտապես ժպտացող դեմքով սապատավորի կմախքները, ինչպես նաեւ Արեւելքի ու Արեւմուտքի խեղկատակների անբաժան ուղեկից հանդիսացող աքաղաղի ոսկորները գտնվել են Պահլավունիների Ամբերդ ամրոցի ԺԱ-ԺԲ դդ. բաղնիքի հատակի տակ:

Հայկական բաղնիքներում սովորաբար կանայք եւ տղամարդիկ հերթականությամբ օգտվում էին միեւնույն բաժնից: Այդպիսի բաղնիքներում կանանց տրամադրվում էր շաբաթական երկու օր: Կանանց համար նույնպես բաղնիք այցելելը ծանոթների հետ հաճելի ժամանակ անցկացնելու մի ձեւ էր: Հայտնի են նաեւ մեկուսի բաղնիքներ. օրինակ՝ Անիի եւ Դվինի պալատական բաղնիքներում կան մեկուսացված բաժիններ՝ տղամարդկանց եւ կանանց համար: Իսկ Զվարթնոցի պալատական բաղնիքում (Զ դարի կես) փոքր մասնաբաժինը հատկացված էր արտոնյալ դասին, իսկ մեծը՝ շարքային ծառայողներին:

Բաղնիքը դիտվում էր նաեւ որպես առողջարան: Լոգասենյակի բարձր ջերմաստիճանը եւ մերսումը բարենպաստ ազդեցություն էին թողնում օրգանիզմի վրա՝ նպաստելով զանազան հիվանդությունների բուժմանը: